ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն
Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ին (Ալեքսանդրիա),
Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ին (Դամասկոս),
Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Անտիոքի և համայն Արևելքի Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ-ին (Դամասկոս),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-ին (Թբիլիսի),
Լիբանանի Մարոնիտ Պատրիարք Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԻԱԴԵԻՆ (Բեյրութ),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ
Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ (Լոնդոն),
Ռումինական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԿՅՈՒՐԵՂԻՆ (Սոֆիա),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Չեխոսլովակյան Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
դոկտ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿԻՆ (Պրագա),
Աթենքի և համայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Աթենք),
Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոսիա),
Էիրոնոպոլի և Արևելյան Աֆրիկայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ՆԻԿՈԼԱՅՈՍԻՆ (Ալեքսանդրիա),

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԿՅՈՒՐԵՂ Բ-ին (Ալեքսանդրիա),
Համայն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադդիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն
ՏԻՄՈԹԵՈՍԻՆ (Կերալա),
Նորին Ամենապատվություն Կարդինալ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ (Հռոմ),
Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ Եպիսկոպոսին
(Նյու-Յորք),
ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի Նախագահ
Գերարժանապատիվ Հայր Ժ. ԻՐՎԻՆ ՄՅՈՒԼԼԵՐԻՆ
(Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿԻՑՎԻՏԻՆ (Տալլին),
Մխիթարյան Ուխտի Աբբահայր Հայր ՀՄԱՅԱԿ վարդապետ
ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան Ուխտի Աբբահայր Գերապայծառ Հայր ՄԵՍՐՈՊ վարդապետ
ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (Վիեննա),
Ֆրանչիսկյան միաբանության Կուստոդ
Հ. ԼԻՆՈՒՍ ԿՈՊՊԻԵԼԼԻԻՆ (Երուսաղեմ),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐ Դ' ՀՈՒՖՏԻՆ (Ժընև):

Մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ և Ս. Հարության ավետիսով կողջունենք Ձեզ եղբայրական ջերմագին սիրով և կմաղթենք, որ Աստված Ձեզ պարգևե կենաց երկար տարիներ քաջառողջությամբ, որպեսզի սուրբ ներշնչումներով և շինարար ոգիով շարունակեք Ձեր նվիրական առաքելությունը, ի ծաղկումն Ձեր Ս. Եկեղեցիին և ի լուսավորումն Ձեր հավատացյալ ժողովուրդին:

Մեր քրիստոնեական հավատքի բավմադարյան վեմ Ս. Էջմիածնի սեղաններու առաջ, Մենք կմնանք աղոթող հարուցյալ Քրիստոսի սիրո և խաղաղության փրկարար պատգամներուն հաղթանակին համար ի մեջ բոլոր ժողովուրդներու, ի մեջ համայն մարդկության:

Փա՜ռք հրաշափառ Հարության Հիսուսի Քրիստոսի, որ մեծ ապավենն է և հաղթությունը և կյանքի աղբյուրը մեր հուսացյալ հոգիներուն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ.· Տ. ՎԱՋԳԷՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդները մի անգամ ևս պատրաստվում են տոնելու, հանդիսավոր և սրտագին ուրախությամբ, այն օրը, երբ Աստուծո Որդին, մեզ համար մարդացած, մեռելներից հարություն առավ հաղթականորեն, խավարից մեզ առաջնորդելով դեպի լույս, տխրությունից դեպի ուրախություն, մահից դեպի կյանք:

Աղոթելով լի պատրաստության այս օրերին, Մեր խոհերն ուղղվում են դեպի Ձերդ Սրբությունը և Ձեր եպիսկոպոսները, քահանաները և հավատացյալները: Մենք Ձերդ Սրբության մատուցում ենք մեր անկեղծ և լավագույն բարի մաղթանքները մեր Տիրոջ Ս. Հարության լուսափայլ տոնի առթիվ: Մեր աղոթքն է, որ հարուցյալ Տերը Իր օրհնությունները հեղու Ձերդ Սրբության և Ձեր ամբողջ Եկեղեցու վրա:

Այս տարին նշանավորվեց աննախընթաց մի ժողովով, որտեղ Ձերդ Սրբությունը միացավ մեր քրիստոնյա եկեղեցիների հարգելի մյուս գլուխների հետ, միջոցներ որոնելու առավել ազդու վկայության մեր Աստուծուն և Փրկչին Հիսուսի Քրիստոսի և այն Ավետարանին, որ Նա քարոզեց: Մխիթարական սույն դեպքը առավել մի ներշնչում է Մեզ համար: Աղոթում ենք, որ Ս. Հոգին ընկերանա նրանց բոլոր գործերին, որոնք կրում են Քրիստոսի անունը և Աստուծո զորությունը լինի նրանց ճիգերի մեջ՝ խաղաղություն, արդարություն և միություն բերելու նրանց, որոնք փրկված են գառան արյամբ, և որոնք կոչված են Նրա հետ իշխելու մի աշխարհում, որտեղ Նա ամենայն ինչ վերանորոգել է:

Այս սրտագին աղոթքներին և եղբայրական լավագույն մաղթանքներին միացնում ենք, Ձերդ Սրբություն, Ձեր հարգելի անձնավորության և Ձեր հոգևորականության ու ժողովրդի համար, Մեր խորունկ հարգանքի արտահայտությունն ի Տեր, որը մահացավ և կրկին հարություն առավ:

ՊԱՊ ՊԱՎԼՈՍ Ա

ՎԱՏԻԿԱՆ

Եղբայրաբար ողջագուրելով Ձերդ սիրեցյալ Սրբությանը Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ, ցանկանում ենք Ձեզ Իր հարատև ուրախությունը:

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

Տիեզերական Պատրիարք Հունաց

ՍՏԱՄԲՈՒԼ

Ուրախ սրտով հղում եմ Ձերդ Սրբությանը մեր Փրկչի հարության տոնահանդեսի ուրախալիր ավետիսը:

Ամբողջ հոգով մաղթում եմ, որպեսզի այդ սրբական ուրախությամբ համակված լինենք մենք՝ հարության մեծ օրը տոնողներս, և որպեսզի այդ սրբական ուրախությունը առանց պակասելու ոգեշնչի մեզ մեր հովվական սրբական ծառայության սխրանքների մեջ:

Թող միշտ մեզ վրա լինի հարուցյալ Քրիստոսի գերեզմանից եկող օրհնությունը, մեզ հետ լինի կյանքը և խաղաղությունը, մեզ հետ լինի հավատի հաղթանակը և երկնքի հավիտենական երանելության բերկրանքը:

Ձերդ Սրբության եղբայրական սիրով և նվիրվածությամբ ի Քրիստոս,

ԱԼԵՔՍԻ

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ՄՈՍԿՎԱ

Քրիստոսի Ս. Հարության տոնը շնորհավորելով, ողջունում ենք Ձեզ, եպիսկոպոսական դասուն և համայն հայ հավատացյալներին, մաղթելով հարուցյալ Փրկչի թափուր գերեզմանից ճառագայթող կենարար լույսի շնորհները Ձեր Եկեղեցու և ժողովրդի վրա:

«Արդարև յարեաւ Տէր»:

Կյանքի և անմահության մեծ տոնի ուրախ առիթով, մաղթում ենք Ձեզ երկար հովվապետություն, ի մխիթարություն Ձեր հավատացյալների և ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցու:

Մնալով միշտ ի Քրիստոս Ձեր եղբայրը,

ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ

Պատրիարք Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի

ՔԻՖԻՍԻԱ

Ամեն տարի երախտագիտությամբ հիշում ենք այն սարսափելի չարչարանքների մասին, որոնց դիմացավ մեր սիրելի Տերը, կամավոր և խոնարհ կերպով: Այդ բոլոր չարչարանքները Նա կրեց հանուն մարդկային ազգի փրկության: Ապա Իր հարությամբ Նա հավատ ու վստահություն ներշնչեց Իր առաքյալներին, որոնք դարձան պայծառ լուսատուներ և շրջելով աշխարհով մեկ, լուսավորեցին ժողովուրդներին Քրիստոսի իմաստությամբ: Նրանք Ավետարանի ոգով սեր և խաղաղություն քարոզեցին մարդկանց միջև և կոչ արեցին հետևելու Քրիստոսի օրինակին, արժանանալու համար հարության մեծ ուրախությանը:

Նման ուրախություններ ենք մաղթում Ձերդ Սրբության, իբրև վարձատրություն Ձեր առաքելաշավիղ իմաստուն գործերի, փրկելու համար հոգիները Ձեր Եկեղեցու հոգևոր դասի և համայն հավատացյալ հոտի:

Դպիրների հետ մեկտեղ գոչում ենք. «Հարության օրվա հանդեսին ողջագուրվենք և ներենք իրար և երգենք՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց, մահվամբ զմահ կոխյաց և մահվան գերեզմանում կենդանի մնաց»:

Մեր Փրկչի՝ Քրիստոսի շնորհները թող միշտ լինեն մեզ հետ: Ամեն:

Եղբայրական սիրով ի հարուցյալ Քրիստոս՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

ԴԱՄԱՍԿՈՍ

Մենք ստացած ենք Ձերդ Սրբության 31 մարտ 1965 թվակիր նամակը, որ մեզ բերեց Ձեր սրտագին շնորհավորություններն ու անկեղծ մաղթանքները մեր Փրկչի հարության առթիվ: Մինչ մենք մատուցում ենք Ձերդ Սրբության մեր ջերմ շնորհակալությունը, միաժամանակ աղոթում ենք ամենակարող Փրկչին, որ հարություն առավ մահից, այսօրվա օրհնությունները սփռելու Ձերդ Սրբության, հոգևորականության և բոլոր հավատացյալների վրա, մեր Ս. Եկեղեցու դրոշի ներքև:

Արդարև, Ս. Հարության օրը հավատացյալների համար լեցուն է խրատներով և դասերով: Մեր աչքի առջևն է մահվան տկարությունը, որն իշխեց մարդկության վրա մինչև հաղթական այն օրը, երբ մարդացած Աստվածը, որին խաչեց և մահվան դատապարտեց հրեական ազգը, պարտության մատնեց նրան Իր հաղթական հարությամբ, քաջալերելով հավարավոր և հավարավոր Իր հետևորդներին, հեգնելու մահը և ստանալու մարտիրոսության թագը, հավատալով Նրան, որ իրենց ևս հարություն առնել պիտի տա: Մինչ մենք հավակնում ենք զմեզ համարել որպես ճշմարիտ վկաները մեր Տիրոջ սուրբ հարության՝ ոչ-քրիստոնյաների մեջ, հույս ունենք, որ մենք ևս պիտի հարություն առնենք վերջին օրը Իր միջոցով, լինելու այնտեղ, որտեղ Ինքն է:

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ

Անտիոքի և համայն Արևելքի

Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք

ԴԱՄԱՍԿՈՍ

Եղբայրական սիրով և ուրախությամբ ողջունում ենք Ձերդ Սրբությանը և համայն հայ հավատացյալ ժողովրդին Ս. Զատկի մեծ տոնի առթիվ և գոչում.

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Իր հրաշափառ հարությամբ Քրիստոս պարգևեց մարդկանց երջանկություն, հաստատեց անմահություն, բերեց մարդկությանը խաղաղություն, ազատելով նրանց մահվան գերությունից, մեղքից և սատանայից:

Փա՛ռք և երախտագիտությո՛ւն մեր Տեր Հիսուս Քրիստոսին, այժմ և հավիտյան:

Մեզ և Մեր հոտը հանձնելով Ձերդ Սրբության աստվածահաճո աղոթքներին, մնում ենք խորին հարգանք և ամբողջովին Ձեզ նվիրված սիրեցյալ եղբայր,

ԵՓՐԵՄ Բ

Կաթողիկոս-Պատրիարք համայն Վրաստանի,

Միտրոպոլիտ Մծխեթայի և Թբիլիսիի

«Քրիստոս յարեաւ:
Արդարև յարեաւ Տէր: Ալէլուիա»:
Իր խաչելությունից առաջ մեր Տերը Հիսուս Քրիստոս մարգարեացավ ասելով. «Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, կամեսեսին ձգեցից առ իս» (Յովհ. ԺԲ 32):
Ավագ ուրբաթ օր Իր խոնարհության մեջ, մարդիկ չէին կարող ըմբռնել Նրան որպես Փառքի Թագավորը: Սակայն, խաչին վրա Նրա վոհաբերող մահվան գաղտնի պտուղը հայտնի դարձավ երրորդ օրը:
Հոր զորությամբ և փառքովը Նա հաղթական դուրս եկավ գերեզմանից: Նրա սքանչելի հարությունը ցույց տվեց Նազարեթցի Հիսուսին որպես փառավորված Փրկիչը, որին պատկանում է «ամեն իշխանություն երկնքում և երկրում» (Մատթ. ԻԸ 18):
Նախ հարուցյալ Քրիստոս երևաց Իր ընտրյալ աշակերտներին և այսպես վերադարձրեց նրանց համարձակություն և առաքելական վկայություն: Ապա Նրա Եկեղեցու հավատարիմների վկայությունը շատ հեռուները տարածվեց, և շատ երկրներում մարդկանց շրթներից լսվեց այն խոստովանանքը, որ «Հիսուս Տերն է»:
Մինչ տոնում ենք Զատիկը, հավատով միանում ենք այն անհամար բազմություններին, որոնց բարձրյալն Հիսուս ձգել է դեպի Ինքը: Մենք դարձյալ հղում ենք Ձեզ, սիրեցյալ Եղբայր մեր ի Քրիստոս, և Ձեր համայն հավատացյալ ժողովրդին, այս ուրախառիթ տոնի ողջույնը:
«Քրիստոս յարեաւ:
Արդարև յարեաւ Տէր: Ալէլուիա»:
Թո՛ղ ամենակարողն Աստված օրհնի Ձեզ, Ձեր հոգևորականությունն և Ձեր համայն հավատացյալ ժողովուրդը, և թող հարուցյալ Քրիստոսը, միշտ ապրող և ներկա, բնակվի Ձեր մեջ և պահպանի Ձեզ Իր սիրո մեջ, Ս. Հոգու զորությամբ:
Եղբայրական սիրով և ողջույններով, Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ՄԱՅՐ.
Արքեպիսկոպոս Քենտրբերիի,
Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ համայն Անգլիայի

ԼՈՆԴՈՆ

Խորունկ սիրով շնորհակալություն ենք հայտնում Ձեր եղբայրական շնորհավորանքների համար ուղարկված մեր Փրկչի՝ Քրիստոսի Ս. Հարության առթիվ, և մեր ամբողջ սրտի ջերմությամբ մաղթում ենք Ձեզ երկար կյանք և բազում բարիքներ հարուցյալ Տիրոջից, Ձերդ Սրբության համար անձնապես, Ձեր Եկեղեցու սպասավորներին և համայն հավատացյալ ժողովրդին:

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ
Պատրիարք Ռումինիայի

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Սիրով ողջագուրում եմ Ձեզ և սրտագինս ողջունում.
«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:
Հարուցյալ Քրիստոսը բերեց մեզ ամենայն ուրախություն և խաղաղություն: Իր հարությամբ Նա սկիզբը հանդիսացավ մեր բոլորի հարության ու մեղքերի թողության: Մենք հավատում ենք Քրիստոսին և Նրա հարությանը, լուսավորվում Նրա խորհուրդներով ու գիտենք, որ ամենայն ինչ անցավոր է, բայց Նրա փառքը հավիտյան է: Ուստի և աղոթում ենք, որ Քրիստոս Իր շնորհներն ու խաղաղությունը պարգևի բոլոր մարդկանց, որպեսզի նրանք ապրեն փոխադարձ սիրով ու հաճությամբ՝ հանուն երկրային ընդհանուր բարօրության և երկնային փրկության:
Սրտագինս աղոթում ենք, որ հարուցյալ Քրիստոսը պահի ու պահպանի Ձեզ առողջ, պարգևի Ձեր հոգևոր դասին ու հավատացյալ հոտին խաղաղություն ու երջանկություն

ԿՅՈՒՐԵՂ
Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

Եղբայրական սիրով ի Քրիստոս շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը, Հայ Եկեղեցու հոգևոր դասին և համայն հավատացյալ հոտին՝ Ս. Հաղորության մեծ տոնի առթիվ:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Աղոթում ենք առ Աստված, որ Տերը պարգևի համայն մարդկության խաղաղություն և բարօրություն, ինչպես և պայծառություն մեր Ս. Եկեղեցուն:

Հանձնվելով Ձերդ Սրբության աղոթքներին, մնում ենք միշտ եղբայրական սիրով ի հարուցյալն Քրիստոս,

ՀԵՐՄԱՆ

Պատրիարք համայն Սերբիայի

ԲԵԼԳՐԱԴ

Սրտագինս ու սիրով շնորհավորում եմ Ձեր վատկական տոնը և անձամբ իմ, Չեխոսլովակյան Եկեղեցու կենտրոնական խորհրդի և մեր ամբողջ հոտի անունից մաղթում Ձերդ Սրբության ուրախություն, առողջություն և աստվածային խաղաղություն: Թո՛ղ խաչված, հարություն առած և փառաբանված Աստուծո՝ Հիսուս Քրիստոսի սերն ու շնորհները միավորեն մեզ բոլորիս մեկ համերաշխ ընտանիքի մեջ, ի պայծառություն Նրա Եկեղեցու, համրապնդումն ամբողջ աշխարհի խաղաղության, որն այնքան անհրաժեշտ է մարդկության համար:

ԴՈԿՏՈՐ ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿ

Պատրիարք Չեխոսլովակյան Եկեղեցու

ՊՐԱԳԱ

Հարուցյալ Փրկիչը այժմ Իր փառքի մեջ է և Նա ընդմիշտ Իր Եկեղեցու հետ է, երեկ, այսօր և հավիտյան:

Ընդունեցեք մեր եղբայրական շնորհավորությունները Ս. Զատկի առթիվ և մեր մաղթանքները, որպեսզի Տերը պահպանի մեր Ս. Եկեղեցին, ի փառս Իրեն և ի փրկություն հավատացյալների:

Ի քրիստոս եղբայր Ձեր,

ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ

Արքեպիսկոպոս Աթենքի և համայն Հունաստանի

ԱԹԵՆՔ

Ամբողջ տիեզերքը այսօր ավետում է մեր Փրկչի հրաշափառ հարությունը, որը խորտակեց դժոխքի իշխանությունը և մեռելներից հարություն առավ:

Մեր սրտի խորքից ողջունելով Փրկչի հարությունը, որը «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց», շնորհավորում ենք Ձեզ և հաղորդում մեր սույն զգացումները, եղբայրաբար ողջագուրելով Ձեզ, Ձեր Եկեղեցին և ժողովրդին:

Թո՛ղ հարուցյալ Փրկիչը ավելացնի Ձեր կյանքի տարիները, Իր անսահման բարիքներով լիացնի Ձեզ, պարգևելով քաջառողջություն և բարի հովվապետություն, ի պայծառություն Հայ Եկեղեցու:

Մնամ ի Քրիստոս եղբայր,

ՄԱԿԱՐԻՈՍ

Միտրոպոլիտ Կիպրոսի

ՆԻԿՈՍԻԱ

Խորին շնորհակալություն հայտնելով, փոխադարձում ենք Ձերդ Սրբության մաղթանքները, աղոթքները և վատկական ուրախությունները: Խաղաղություն ու բարգավաճում մեր հույժ սիրեցյալ ժողովրդին, որ իր մարտիրոսագրության հիսներորդ տարեդարձն է նշում:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՏԻԿԱՆ

Շատ երախտապարտ ենք Ձեր Վեհափառ Տերության՝ վատկական ավնիվ մաղթանքներուն համար:

Կինդրենք, որ հաճիք ընդունիլ մեր ջերմ բարեմաղթությունները՝ վորացած մեր աղոթքով առ հարուցյալ Հիսուս, որպեսվի շնորհի Ձեվի քաջառողջություն, գործոց հաջողություն և բավմաթիվ հոգևոր մխիթարություններ, Ձեր կյանական և ապագա առաքելության մեջ:

Ուրախությամբ կհետևինք, ապրիլյան եղեռնի հիսնամյակին առթիվ, Մայր Հայրենիքին մեջ կատարվելիք ոգեկոչումի հանդիսություններուն:

Հայությունը, ի սփյուռս աշխարհի, կընթանա այս գեղեցիկ օրինակին համաձայն, և կջանա արժանավոր կերպով հարգելու հիշատակը մեր անմահ վոհերուն, որպեսվի ներկա և ապագա մեր սերունդները անոնցմով պարծենան, անոնց գաղափարականով ապրին և անոնց վսեմ տեսլականեն ներշնչվին:

Առիթեն կոգտվինք խորին շնորհակալություն հայտնելու՝ մեվի ավնվորեն Ձեր առաքած «Կանոնագիր Հայոց» արժեքավոր հատորին համար:

Մնամք եղբայրական ջերմ սիրով և հարգալիր ողջույններով, Վեհափառ Տերությանդ աղոթակից՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԷ ՊԱԹԱՆՅԱՆ
Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիո

ԲԵՅՐՈՒԹ

Մինչ թևակոխում ենք եղանակների թագուհին՝ գարունը, մեր Տիրոջ հարության տոնակատարությամբ, ողջունում ենք Ձերդ Սրբությանը խաղաղությամբ և սիրով, հանուն Եպիսկոպոսական Եկեղեցու:

Մենք գլխավորապես գոհություն պետք է մատուցենք մեր երկնավոր Հորը, Իր Որդու՝ մեր Տիրոջ հրաշափառ Հարության համար, որովհետև Նա իսկական վատկական Գառնուկն է, որ վոհվեց մեվ համար, և որ վերացրեց աշխարհի մեղքը, Նա, որ Իր մահով հաղթեց մահվան, և կրկին հարություն առնելով, մեվ բերեց հավիտենական կյանքը:

Տարվա ամեն կիրակի օր, Եպիսկոպոսական Եկեղեցում, մեր հոգևորականությունն ու ժողովուրդը միանում են Հայ Եկեղեցու հոգևորականության և ժողովրդին, վերհիշելով Քրիստոսի հարությունը, սուրբ հաղորդությամբ ընդունելով Իր մարմինն ու արյունը, խնդրելով, որ մշտական կերպով առաջնորդվենք ճշմարտության ճանապարհով, որպեսվի կարողանանք միասնաբար պահել հավատը և հոգին, խաղաղության պարտավորությամբ և կյանքի առաքինությամբ:

Ս. Զատկին հատկապես մենք հրճվում ենք, որ հարություն ենք առել մեղքի մահից դեպի կյանքը առաքինության, մինչ միացնում ենք մեր խոհերը ամենուրեք գտնվող մեր քրիստոնյա եղբայրներին, աղոթելով, որ Աստված առաջնորդի աշխարհը խաղաղության ճանապարհով, և որ Նա արագորեն Իր Եկեղեցուն շնորհի միություն և համերաշխություն:

Ամենայն բարի մաղթանքներով Ձերդ Սրբության, Ձեր Եկեղեցու և ժողովրդի քաջառողջության և բարգավաճման համար, որով մնում ենք Ձեվ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ԼՈՐԻՆՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ
հարաբերությանց ժողովի:
նախագահ Արևելյան եկեղեցիների
Եպիսկոպոս Արևմտյան Նյու--Յորքի,

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Բերում եմ Ձերդ Սրբության իմ սրտագին շնորհավորությունները Քրիստոսի Հարության պայծառ տոնի առթիվ: Թող հարուցյալ Քրիստոսի կենարար լույսը խաղաղությամբ լուսավորի Ձեվ, Ձեր մեծավոր գործակիցներին և հնադարյան Հայաստանյայց Եկեղեցին:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
Լատվիայի Ավետարանական-Լութերական
Եկեղեցու Արքեպիսկոպոս

ՌԻԳԱ

ՀՅՈՒՍ ԳՐՈՒՄՆԵՐ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԿՀԴՇՄԻՄ

Փրկչին հրաշափառ հարության ցնծերգը կինչե դարձյալ Ս. Էջմիածնեն դեպի Ս. Ղազար, բերելով Մխիթարի որդիներուս Ձերդ Վեհափառության սիրալեղ մաղթանքն և հուսադրիչ իղձերը, ավետավոր հրեշտակներու անուշ մեղեդիներուն հետ:

Օրհնյալ է հարությունն Քրիստոսի: Հուզումով կփոխադարձենք, Վեհափա՛ռ Տեր, և մեր խոնարհ աղոթքը կբարձրացնենք առ Փրկիչն հարուցյալ, մաղթելով Ձեզի երկար ու երջանիկ տարիներ, որպեսզի ի կատար ածեք Ձեր նվիրական առաքելությունը և շինարար բոլոր ծրագիրները:

Քրիստոսի հարությունը գրավականն է մեր ալ հաղթանակին, երաշխիքը հոգիներու անմահության, անսասան հավատիքը Ավետարանի քարոզության աստվածային ծագումին և անսխալ ճշմարտության, նվիրականացած մեր բազմահավար սուրբ մարտիրոսներու վկայական արյունով:

Եվ ահա, ապրիլյան նահատակներու հիսնամյակի այս սրբազան շրջանին, կրոնքի և հայրենիքի մեր բյուրավոր զոհերու սուրբ Գողգոթային վրա, պայծառ կցոլա կանթեղը մեր ազգի անջինջ հավատքին, վառ կայծկլտումով, իբրև առհավատչյա նաև մեր ցեղին ալ վերանորոգ հարության և հավերժության:

Փրկչին Հարության սուրբ տոնը թող գա այս տարի լույսի շողերով օծելու ապրիլյան մեր մեծ սուգը, և աստվածային հույսի անմար ցոլքեր արծարծե հոգիներու մեջ:

Մեր անկեղծ և սրտաբուխ մաղթանքն է, որ մեր նոր սերունդները, հայրենիքի և Սփյուռքի մեջ, արժանավոր ժառանգներն ըլլան մեր նախնյաց լույս հավատքին և աննկուն կորովին:

Փոխադարձ սիրո ջերմ ողջունիվ և խորին մեծարանքով մնամ Ձեր Վեհափառ Տերության աղոթակից,

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ
Ընդհանուր աբբահայր Մխիթարյան միաբանության

ՎԵՆԵՏԻԿ

«Քրիստոս յարեաւ»:

Թո՛ղ խաղաղության Տերը շնորհի Ձերդ Սրբության և Ձեր Եկեղեցու բոլոր հավատացյալներին սուրբ հարության ուրախությունն ու խաղաղությունը:

ՎԻՍԵՐ Դ՝ ՀՈՒՖՏ
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

ԺԸՆԵՎ

Ս. Զատկի առթիվ շնորհավորում ենք Ձեզ, հարուցյալ Տիրոջ ճառագայթող լույսի ուրախալի վստահությամբ:

ՆՑՈՒ-ՑՈՐՔ ՋՈՆ ՀԱՅՆԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Շնորհավորում ենք Ձեզ և հավատացյալ հայ եղբայրներին վատկական տոների առթիվ, մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և հաջողություններ խաղաղության համար մղվող պայքարում:

Անդրկովկասի մուսուլմանների
Շեյխուլիսլամ՝ ՀԱՋԻՄՋԱԴԵ
Մուֆտի՝ ՎԱԼԻՋԱԴԵ

ԲԱՔՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԵՅԽՈՒԼԻՍԼԱՄ ՀԱՔԻՄԶԱԴԵԻՆ ՄՈՒՖՏԻ ՎԱԼԻԶԱԴԵԻՆ

ԲԱՌՈՒ

Անկեղծորեն շնորհակալ ենք պատկական շնորհավորանքի համար: Աղոթող ենք առ Աստված՝ պարգևելու Ձեզ քաջառողջություն և հաջողություններ Ձեր գործունեության ասպարեզում: Ջերմապես մաղթում ենք ադրբեջանական եղբայրական հավատացյալ ժողովրդին բարօրություն և հետագա բարգավաճում: Թո՛ղ ամրանան ու վաղգանան եղբայրական բարեկամության կապերը հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ